Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով

18-22 հունվարի 2005 թ., Քոբե, Հյոգո, Ճապոնիա

# Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր*

## Ազգերի և համայնքների` աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում

www.unisdr.org/wcdr

*Հասված Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի վերջնական զեկույցից (A/CONF.206/6)

International Strategy
ISDR
for Disaster Reduction

Ծրագիրը թարգմանվել և տպագրվել է ՄԱԶԾ
«Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման
ազգային կարողությունների հզորացում» Ծրագրի կողմից:
Երևան 2009

Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով

18-22 հունվարի 2005 թ., Քոբե, Հյոգո, Ճապոնիա

# Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր*

## Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում

www.unisdr.org/wcdr

*Հատված Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի վերջնական զեկույցից (A/CONF.206/6)

## Բովանդակություն

*պարագրաֆ*

I. Նախաբան ... 1-9

Ա. Աղետներից առաջացած մարտահրավերներ ... 2-5

Բ. Յոկոհամայի ռազմավարություն. քաղված դասեր և հայտնաբերված բացեր ... 6-9

II. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով նպատակները, ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակները ... 10-12

Ա. Նպատակները ... 10

Բ. Ակնկալվող արդյունքները ... 11

Գ. Ռազմավարական նպատակներ ... 12

III. 2005–2015 թթ. գործողությունների ծրագրի առաջնայնությունները ... 13-20

Ա. Ընդհանուր դրույթներ ... 13

Բ. Գործողության գերակայությունները ... 14-20

1. Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքի վրա է ... 16

2. Բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը ... 17

3. Օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը բոլոր մակարդակներով անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար ... 18

4. Նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները ... 19

5. Բոլոր մակարդակներով բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստվածությունը ... 20

IV. Իրականացում և հետագա գործողություններ ... 21-34

Ա. Ընդհանուր դրույթներ ... 21-29

Բ. Պետություններ ... 30

Գ. Տարածաշրջանային կազմակերպություններ և հաստատություններ ... 31

Դ. Միջազգային կազմակերպություններ ... 32

Ե. Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը ... 33

Զ. Ռեսուրսների համախմբում ... 34

Հավելված

Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում որոշ բազմակողմ զարգացումները ... 24

# I. Նախաբան

1. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովը տեղի է ունեցել 2005 թվականի հունվարի 18-22-ը Քոբե քաղաքում (Հյոգո, Ճապոնիա)՝ ընդունելով 2005-2015 թվականների «Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացման գործողությունների ծրագիրը» (այսուհետև՝ «Գործողությունների ծրագիր»): Համաժողովը բացառիկ հնարավորություն է ընձեռել աղետների նկատմամբ խոցելիության[1] և աղետների վտանգի[2] նվազեցմանն ուղղված ռազմավարական և համակարգված մոտեցումների ներկայացման և խթանման համար: Այն կարևորել է ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունը ու ցույց տվել այդ կարողությունների ձևավորման ուղիները[3]:

## Ա. Աղետներից առաջացած մարտահրավերներ

2. Աղետների հետևանքով առաջացած կորուստները հետզհետե աճում են՝ լուրջ հետևանքներ ունենալով մարդկանց, անհատների (մասնավորապես՝ աղքատների) գոյատևման, արժանապատվության, կենսամիջոցների և դժվարությամբ ձեռք բերված նվաճումների վրա: Աղետների վտանգը գլոբալ մտահոգության առարկա է, քանի որ դրա հետևանքները և ակտիվությունը մի տարածաշրջանում կարող են ազդեցություն ունենալ մյուս տարածաշրջաններում գոյություն ունեցող վտանգների վրա և ընդհակառակը: Զուգորդվելով մի շարք խոցելի գործոնների, այդ թվում՝ փոփոխվող ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական պայմանների, չպլանավորված ուրբանիզացիայի, բարձր ռիսկային գոտիներում զարգացումների, թերզարգացածության, շրջակա միջավայրի դեգրադացիայի, կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության, երկրաբանական աղետների, հազվագյուտ ռեսուրսների համար մրցակցության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակների ազդեցության հետ, այս երևույթը ցույց է տալիս, որ ապագայում աղետները կարող են հարաճուն վտանգ ներկայացնել համաշխարհային տնտեսության, ազգաբնակչության և զարգացող երկրների կայուն զարգացման համար: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ամեն տարի աղետներից տուժել է միջին հաշվով 200 միլիոն մարդ:

3. Աղետի ռիսկ առաջանում է, երբ վտանգները ազդում են ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի խոցելի գործոնների վրա և հակառակը: Աղետների շարքում զգալի թիվ են կազմում ջրօդերևութաբանական ծագում ունեցող իրադարձությունները: Թեպետ աղետների ռիսկի նվազեցման և դրանց դիմագրավելու ունակությունների մեծացման անհրաժեշտության և կարևորության գիտակցումը հետզհետե խորանում է, աղետներն ու, մասնավորապես, ռիսկերի կառավարումն ու նվազեցումը շարունակում են մնալ որպես գլոբալ մարտահրավերներ:

4. Ներկայումս միջազգային մակարդակով համաձայնություն կա, որ ռիսկերի նվազեցմանն ուղղված քայլերը պետք է հետևողականորեն ներառվեն քաղաքականությունների, կայուն զարգացման և աղքատության հաղթահարման պլանների ու ծրագրերի մեջ, ինչպես նաև

1 «Խոցելիությունը սահմանվում է որպես «համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ առանձնահատկություններ և հանգամանքներ, որոնց հետևանքով դրանք խոցելի են դառնում վտանգի վնասակար ազդեցությունների նկատմամբ» (ՄԱԿ/ԱՆՄԿ, Ժնև, 2004):

2 «Վտանգը» սահմանվում է որպես «պոտենցիալ վտանգավոր երևույթ, նյութ, մարդկային գործունեություն կամ վիճակ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, խեղանդամության, հիվանդությունների կամ այլ առողջական հետևանքների, գույքի վնասման, կենսամիջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վնասի:» (ՄԱԿ/ԱՆՄԿ, Ժնև, 2004):

3 Գործողությունների ծրագրի շրջանակներն ընդգրկում են ինչպես բնական ծագում ունեցող վտանգները, այնպես էլ հարակից բնապահպանական և տեխնոլոգիական վտանգները և ռիսկերը: Այն, այսպիսով, համակողմանի մոտեցում է ցուցաբերում աղետների ռիսկերի կառավարման և դրանց միջև հարաբերության նկատմամբ, որոնք, ինչպես նշված է Յոկոհամայի ռազմավարության մեջ, կարող է զգալի ազդեցություն ունենալ սոցիալական, տնտեսական, մշակութային և բնապահպանական համակարգերի վրա (Բաժին I, Մաս Բ, նամակ I, էջ 8):

սասարվեն երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցության (ներառյալ գործընկերությունների) միջոցով: Կայուն զարգացումը, աղքատության հաղթահարումը, բարեխիղճ կառավարումը և աղետների ռիսկերի նվազեցումը փոխկապակցված նպատակներ են: Ուստի սպասվող մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է արագացնել համայնքային և պետական մակարդակներով ռիսկերի կառավարման և նվազեցման անհրաժեշտ հաստատություններ ստեղծելու ուղղությամբ արվող ճայլերը: Հարկ է գիտակցել, որ այս մոտեցումը կարևոր նշանակություն ունի միջազգայնորեն ընդունված զարգացման նպատակներին, ներառյալ՝ «Հազարամյակի հռչակագրում» ամփոփված նպատակներին հասնելու առումով:

5. Անցած մի քանի տարիների ընթացքում աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող ճայլերի խթանման կարևորությունը ճանաչվել է միջազգային և տարածաշրջանային, ինչպես նաև պետական և տեղական մակարդակներով ընդունված հռչակագրերում և գործողությունների ծրագրերում[4]:

## Բ. Յոկոհամայի ռազմավարություն. քաղված դասեր և հայտնաբերված բացեր

6. Առավել անվտանգ աշխարհի Յոկոհամայի ռազմավարությունը՝ «Բնական աղետների կանխման, պատրաստականության և նվազեցման մասին 1994 թվականի ուղենիշները և իրականացման գործողությունների ծրագիրը» («Յոկոհամայի ռազմավարություն»), աղետների ռիսկերի և դրանց հետևանքների նվազեցման անկյունաքարային ուղեցույց է:

7. Յոկոհամայի ռազմավարության[5] իրականացման առաջընթացի վերանայման արդյունքում բացահայտվել են այն հիմնական մարտահրավերները, որոնք կարող են ծառանալ առաջիկա տարիներին՝ կայուն զարգացման համատեքստում աղետների ռիսկերի ուղղությամբ ավելի հետևողական գործողություններ ձեռնարկելու և ազգային ու տեղական մակարդակներով կարողությունների ամրապնդման միջոցով ռիսկերին դիմակայելու ունակություններ ձևավորելու առումներով:

8. Վերանայման հաշվետվությունում շեշտվել և կարևորվել է այն, որ աղետների ռիսկերի նվազեցման գործողություններն ավելի լրջորեն հիմնվեն տեղական համայնքների իրազեկման, անձանց սահագրգռելու և ներգրավելու մոտեցման վրա: Այն նաև ընդգծել է ինչպես պետական և տարածքային զարգացման բյուջեներից, այնպես էլ միջազգային համագործակցության և ֆինանսական հաստատությունների կողմից ռիսկերի նվազեցման նպատակներին ուղղված միջոցների անբավարարությունը՝ միաժամանակ նշելով, որ գոյություն ունեցող միջոցները և հաստատված գործելակերպի ներուժն ավելի լավ կիրառելու դեպքում հնարավոր է հասնել աղետների ռիսկի ավելի արդյունավետ նվազեցման:

9. Առանձնահատուկ բացթողումներ և դժվարություններ են բացահայտվել հետևյալ հինգ հիմնական ոլորտներում.

ա) կառավարման ոլորտ (ներառյալ կազմակերպչական, իրավական և քաղաքական համակարգերը),

բ) ռիսկի բացահայտում, գնահատում, հսկողություն և վաղ ազդարարում,

գ) գիտելիքի կառավարում և կրթություն,

դ) ենթադրյալ ռիսկային գործոնների նվազեցում,

ե) արդյունավետ արձագանքման և վերականգնման գործողությունների պատրաստականություն:

4 Գործողությունների որոշ ծրագրեր և հռչակագրեր թվարկված են սույն փաստաթղթի հավելվածում:

5 «Ավելի անվտանգ աշխարհի համար Յոկոհամայի ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայում» (A/CONF.206/L.1):

Սրանք այն հիմնական ոլորտներն են, որոնց համար ղեկավար է մշակվի 2005-2015 թթ. ժամանակաշրջանում իրականացվելիք համապատասխան գործողությունների ծրագիր:

# II. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով. նպատակները, ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակները

## Ա. Նպատակները

10. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովը կայացել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ, հինգ հատուկ նպատակների շուրջ[6].

ա) ավարտել Յոկոհամայի ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայումը, դրա վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն` նպատակ ունենալով թարմացնել աղետների նվազեցման XXI դարի ուղենիշային ծրագիրը,

բ) կանխորոշել այն առանձնահատուկ գործողությունները, որոնց նպատակն է երաշխավորել Յոհանեսբուրգի Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի իրականացման պլանի խոցելիության, ռիսկի գնահատման և աղետների կառավարման վերաբերյալ դրույթների իրականացումը,

գ) կայուն զարգացման հասնելու, բացթողումներն ու խնդիրները բացահայտելու համատեքստում փոխանակել աղետների հետագա նվազեցման ոլորտում առկա հաջողված փորձն ու քաղված դասերը,

դ) բարձրացնել աղետների նվազեցման քաղաքականության կարևորության մասին իրազեկությունը` դրանով իսկ նպաստելով և խթանելով վերջիններիս իրագործումը,

ե) ամրապնդել աղետների ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների վստահելիությունը և առկայությունը բոլոր տարածաշրջանների հասարակայնության և աղետների կառավարման գործակալությունների համար, ինչպես նշված է Յոհանեսբուրգի իրագործման պլանի համապատասխան դրույթներում:

## Բ. Ակնկալվող արդյունքները

11. Հաշվի առնելով այս նպատակները և հիմնվելով Յոկոհամայի ռազմավարության վերանայման արդյունքում կատարված եզրակացությունների վրա` «Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի (այսուհետև` «Համաժողով») մասնակից պետություններն ու այլ դերակատարները համաձայնության են եկել գալիք 10 տարիների ընթացքում ակնկալվող արդյունքների շուրջ.

*Պետություններում և համայնքներում աղետների հետևանքով պատճառված մարդկային, սոցիալական, տնտեսական և բնապահպանական ակտիվների կորուստների էական նվազեցում:*

Այս արդյունքներին հասնելու համար պահանջվում է շահագրգիռ բոլոր դերակատարների, ներառյալ` կառավարությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, կամավորների, մասնավոր հատվածի և գիտական հասարակությունների լիակատար նվիրվածությունն ու ներգրավվածությունը:

6 Գլխավոր ասամբլեայի 2003 թ. դեկտեմբերի թիվ 58/214 որոշմամբ:

### Գ. Ռազմավարական նպատակներ

12. Ակնկալվող արդյունքներին հասնելու համար Համաժողովը որոշում է ընդունել հետևյալ ռազմավարական նպատակների վերաբերյալ.

ա) Բոլոր մակարդակներով աղետների ռիսկի վերաբերող հարցերի ավելի արդյունավետ ընդգրկում կայուն զարգացման քաղաքականությունների, պլանների և ծրագրերի մեջ՝ առանձնահատուկ շեշտ դնելով աղետների կանխման, հետևանքների, դրանց նկատմամբ խոցելիության նվազեցման և պատրաստականության վրա:

բ) Բոլոր մակարդակներով, հատկապես համայնքային մակարդակով, աղետների դիմակայման ունակություններին մշտապես[7] նպաստող հաստատությունների, մեխանիզմների և կարողությունների ստեղծում և ուժեղացում:

գ) Տուժած համայնքների վերակառուցման նպատակով արտակարգ պատրաստվածության, արձագանքման և վերականգնման միջոցառումների մշակման և իրականացման ծրագրերում ռիսկի նվազեցման մոտեցումների հետևողական ընդգրկում:

## III. 2005–2015 թթ. գործողությունների ծրագրի առաջնայնությունները

### Ա. Ընդհանուր դրույթներ

13. Համաժողովը վերահաստատում է, որ ակնկալվող արդյունքներին և ռազմավարական նպատակներին հասնելու համար համապատասխան գործողությունների որոշման համար պետք է հաշվի առնվեն հետևյալ ընդհանուր դրույթները.

ա) Աղետների նվազեցման ոլորտում ավելացող պարտավորությունների ընթացիկ համատեքստում Յոկոհամայի ռազմավարության մեջ ընդգրկված սկզբունքները լիովին պահպանում են իրենց կարևորությունը:

բ) Հաշվի առնելով միջազգային համագործակցության և գործընկերության կարևորությունը յուրաքանչյուր պետություն սեփական երկրի կայուն զարգացման ապահովման, ինչպես նաև ռիսկի նվազեցման ոլորտում արդյունավետ միջոցների ձեռնարկման, իր տարածքում աղետների ազդեցություններից բնակչության, ենթակառուցվածքների և ազգային այլ ակտիվների պաշտպանության առաջնային պարտավորություն է կրում: Միաժամանակ հարաճուն գլոբալ փոխկախվածության պայմաններում բոլոր մակարդակներով աղետների ռիսկի նվազեցման նպատակով գիտելիքի, կարողությունների և շահագրգռության խթանման համար պահանջվում են համաձայնեցված միջազգային համագործակցության հաստատում և նպաստավոր միջազգային մթնոլորտի առկայություն:

գ) Աղետների ռիսկերի նվազեցման համալիր բազմառիսկային մոտեցումը պետք է ընդգրկվի հետաղետային, հետքախումնային կամ աղետների նկատմամբ խոցելի երկրների կայուն զարգացման, օգնության, վերականգնողական և վերակառուցողական քա-

---

7 Դիմակայման ունակություն/դիմադրողականություն՝ «դիմադրելու կամ փոփոխվելու միջոցով հնարավոր վտանգների ենթակա համակարգի, համայնքի կամ հասարակության հարմարվելու ունակությունը, ինչի շնորհիվ այն ապահովում է և պահպանում գործունեության և կառուցվածքի ընդունելի մակարդակ: Սա որոշվում է սոցիալական համակարգի ինքնակազմակերպման մակարդակով, որի արդյունքում ապագա աղետներից ավելի լավ պաշտպանվելու և ռիսկի նվազեցման միջոցառումների բարելավման նպատակով այն ավելացնում է անցյալում տեղի ունեցած աղետներից դասեր քաղելու իր ունակությունը» (ՄԱԿ/ԱՆՄԿ, Ժնև 2004թ.):

ղաճակառություններին, ղլաններին և ծրագրերի մեջ[8]:

դ) Ռիսկի կառավարման բոլոր քաղաքականությունները, պլանները և որոշումների կայացման գործընթացները (ներառյալ՝ ռիսկի գնահատման, վաղ ազդարարման, տեղեկատվության կառավարման, կրթության և ուսուցման գործընթացները) պետք է ներառեն գենդերային հեռանկար[9]:

ե) Անհրաժեշտության դեպքում աղետների ռիսկերի նվազեցման պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն մշակութային բազմազանության, տարիքային և խոցելի խմբերի գործոնները:

զ) Անհրաժեշտ տեղեկություններ և ռեսուրսներ ունենալու, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու լիազորությամբ օժտված լինելու շնորհիվ համայնքները և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ի վիճակի լինեն իրականացնելու աղետների ռիսկի կառավարում և նվազեցում:

է) Աղետների նկատմամբ խոցելի զարգացող երկրները, մասնավորապես՝ նվազ զարգացածները և զարգացող փոքր կղզի պետությունները արժանի են հատուկ ուշադրության խոցելիության և ավելի բարձր մակարդակի ռիսկերի պատճառով, որոնք հաճախ մեծապես գերազանցում են նրանց՝ աղետներին դիմագրավելու և վերականգնվելու հնարավորությունները:

ը) Անհրաժեշտ է ընդլայնել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում միջազգային և տարածաշրջանային համագործակցությունն ու օժանդակությունը, ի թիվս այլոց, հետևյալ քայլերի միջոցով.

- աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կարողությունների ձևավորման նպատակով գիտելիքի, տեխնոլոգիաների և փորձի փոխանցում,
- հետազոտությունների արդյունքների, քաղած դասերի և լավագույն փորձի փոխանակում,
- աղետների ռիսկերի և տարբեր մասշտաբի աղետների ազդեցությունների մասին այնպիսի տեղեկությունների հավաքում, որոնք կարող են նպաստել կայուն զարգացմանն ու աղետների ռիսկերի նվազեցմանը,
- համապատասխան օժանդակության տրամադրում բոլոր մակարդակներով աղետների ռիսկի նվազեցման, իրազեկության բարձրացման նախաձեռնությունների և կարողությունների ձևավորման միջոցառումների կառավարումն ուժեղացնելու համար՝ նպատակ ունենալով բարելավել զարգացող երկրների աղետներին դիմակայելու կարողությունները,
- «Չափից ավելի պարտքերով ծանրաբեռնված աղքատ երկրներին նպատակաուղղված նախաձեռնության» ամբողջական, արագ և արդյունավետ իրագործում՝ հաշվի առնելով աղետների ազդեցությունն այս ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող պետությունների՝ սեփական պարտքերի սպասարկման կարողության վրա,
- Ֆինանսական օժանդակություն՝ առկա ռիսկերը նվազեցնելու և նոր ռիսկերի առաջացումից խուսափելու համար:

թ) Կանխարգելման մշակույթի խթանումը, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման նպատակով համարժեք ռեսուրսների համախմբումը ապագայում զգալիորեն հատուցվելիք

---

8 Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի Յոհանեսբուրգի իրագործման պլան, Յոհանեսբուրգ, Հարավային Աֆրիկա, 2002թ. օգոստոսի 26-սեպտեմբերի 4, պարբ. 37 և 65:

9 Ինչպես վերահաստատվել է Գլխավոր ասամբլեայի 23-րդ հատուկ նստաշրջանի «Կանայք 2000. Գենդերային հավասարությունը, զարգացումը և խաղաղությունը XXI դարում» զեկույցում:

ներդրումներ են: Ռիսկի գնահատումը և վաղ ազդարարման համակարգերը լուրջ միջոցներ են, որոնք պաշտպանում են և փրկում կյանքեր, գույք և կենսամիջոցներ, ավանդ են ու-նենում կայուն զարգացման մեջ և, ուղղված լինելով հաղթահարման կարողությունների ամրապնդմանը, որպես առաջնահերթ միջոցառում, շատ ավելի ծախսարդյունավետ են, քան հետաղետային արձագանքման և վերականգնման միջոցառումները:

ժ) Նաև պրոակտիվ միջոցառումների կարիք կա, քանի որ աղետներին հաջորդող օգնության, վերականգնման և վերակառուցման փուլերը հնարավորություններ են ընձեռում կենսամի-ջոցների վերականգնման, ֆիզիկական և սոցիալ-տնտեսական կառուցվածքների այնպիսի նախագծման և վերակառուցման համար, որոնք մեծացնում են համայնքների դիմակայման ունակությունները և նվազեցնում ապագա աղետների նկատմամբ խոցելիությունը:

ի) Կայուն զարգացման համատեքստում աղետի ռիսկի նվազեցումն ընդհանուր բնույթի խնդիր է և, հետևաբար, միջազգային մակարդակով հաստատված զարգացման նպատակ-ներին, ներառյալ՝ «Հազարամյակների հռչակագրով» փոխհամաձայնեցված զարգացման նպատակներին հասնելու կարևոր տարր: Բացի այդ, ամեն ինչ պետք է արվի, որպեսզի մար-դասիրական օգնությունն օգտագործվի այնպես, որ տեղի ունենա ռիսկերի և ապագա խոցելիության առավելագույն նվազեցում:

## Բ. Գործողության գերակայությունները

14. Հիմք ընդունելով Յոկոհամայի ռազմավարության վերանայված եզրակացությունները, ինչպես նաև Աղետների նվազեցման միջազգային համաժողովի քննարկումներն ու, մաս-նավորապես, համաձայնեցված ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակ-ները՝ համաժողովն ընդունում է գործողությունների հետևյալ հինգ առաջնայնությունները.

1. երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշա-նակության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա է,

2. բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապն-դել վաղ ազդարարման համակարգը,

3. օգտագործել գիտելիքը, նորարարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար,

4. նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները,

5. բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստականությունը բո-լոր մակարդակներում:

15. Ռիսկերի նվազեցման իրենց մոտեցումներում պետությունները, տարածաշրջանա-յին և միջազգային կազմակերպությունները և այլ շահագրգիռ դերակատարները պետք է հաշվի առնեն այս հինգ առաջնայնություններից յուրաքանչյուրի շրջանակներում նշված առանցքային գործողությունները և իրականացնեն դրանք իրենց բնորոշ հանգամանքների և կարողությունների սահմաններում:

### 1. Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանա-կության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքի վրա է

16. Այն երկրները, որոնք մշակում են ռիսկի նվազեցման քաղաքական, օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգեր և ի վիճակի են առանձնահատուկ և չափելի ցուցանիշների միջոցով հասնելու և հետևելու նվաճված առաջընթացին, հասարակության բոլոր հատված-ներում ռիսկերի կառավարման, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման միջոցա-ռումների իրականացման և դրանց համապատասխանության շուրջ համընդհանուր հա-մաձայնության գալու ավելի մեծ հնարավորություններ ունեն:

*Առանցքային գործողություններ.*

*(i) Ազգային ինստիտուցիոնալ և օրենսդրական համակարգեր*

ա) Աջակցել ռիսկի նվազեցման ազգային ինտեգրացված մեխանիզմների, ներառյալ՝ ազգային բազմաճյուղ պլատֆորմի[10] ստեղծմանն ու հզորացմանը՝ միջճյուղային համակարգումը խթանելու նպատակով կատարելով կենտրոնականից մինչև տեղական մակարդակներով պատասխանատվության բաշխում: Ազգային պլատֆորմները պետք է օժանդակեն նաև միջճյուղային համակարգման գործողությանը, ներառյալ՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներով ծավալուն երկխոսության հաստատման միջոցով համապատասխան ճյուղերի մակարդակով իրազեկությունը բարձրացնելու համար:

բ) Ըստ նպատակահարմարության՝ ռիսկերի նվազեցումը ներառել տարբեր մակարդակներում կառավարության զարգացման քաղաքականության և պլանների մեջ, ներառյալ՝ աղքատության նվազեցման ռազմավարության, ճյուղային և բազմաճյուղային քաղաքականության ու պլանների մեջ:

գ) Աղետների նվազեցման ոլորտում ընդունել կամ, որտեղ որ անհրաժեշտ է, լրամշակել առկա օրենքները, ներառյալ այն կանոնակարգերն ու մեխանիզմները, որոնք խրախուսում են ռիսկի նվազեցման և մեղմացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների կատարումը և համապատասխանությունը:

դ) Ճանաչել տեղական ռիսկերի ձևերի և միտումների առանձնահատկությունն ու կարևորությունը, ինչպես նաև ապակենտրոնացնել աղետների ռիսկերի նվազեցման պատասխանատվությունը և ռեսուրսները՝ դրանք բաշխելով համապատասխան ենթապետական և տեղական իշխանությունների միջև:

*(ii) Ռեսուրսներ*

ե) Բոլոր մակարդակներով գնահատել աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում առկա մարդկային ռեսուրսների կարողությունները և ընթացիկ ու ապագա պահանջներին համապատասխան մշակել կարողությունների ձևավորման պլաններ ու ծրագրեր:

զ) Ռեսուրսներ հատկացնել համապատասխան բնագավառներում և կառավարման մակարդակներում աղետների ռիսկերի կառավարման քաղաքականության, ծրագրերի, օրենքների և կանոնակարգերի մշակման և իրականացման համար, ինչպես նաև հատկացնել բյուջետային միջոցներ հստակ որոշված առաջնահերթ գործողությունների իրականացման համար:

է) Կառավարությունները պետք է ցուցաբերեն հստակ քաղաքական կամք՝ աղետների ռիսկերի նվազեցմանը նպաստելու և դրանք զարգացման ծրագրերում ընդգրկելու համար:

*(iii) Համայնքների մասնակցությունը*

ը) Առանձնահատուկ բնույթի քաղաքականությունների ընդունման, ցանցերի ստեղծման, կամավորական ռեսուրսների ռազմավարական կառավարման, դերերի և պատասխանատվության բաշխման, անհրաժեշտ լիազորությունների պատվիրակման և միջոցների տրամադրման միջոցով խթանել համայնքների մասնակցությունը աղետների ռիսկերի նվազեցման գործողություններին:

10 Ազգային պլատֆորմների ստեղծումը Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1999/63 և Գլխավոր ասամբլեայի թիվ 56/195, 58/214, և 58/215 բանաձևերի պահանջն է: «Ազգային պլատֆորմը» ընդհանրական հասկացություն է, որն օգտագործվում է աղետների ռիսկի նվազեցման գործունեության համակարգման և քաղաքականության ուղղորդման ազգային մեխանիզմները վկայակոչելու համար, որոնք բնույթով պետք է լինեն բազմաճյուղային և բազմադիսցիպլինային և ներառեն երկրի հանրային, մասնավոր հատվածների և քաղաքացիական հասարակության բոլոր շահագրգիռ դերակատարներին, այդ թվում, ըստ նպատակահարմարության, Միավորված ազգերի կազմակերպության ազգային մակարդակով ներկայացված գործակալությունները:

## 2. Բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը

17. Աղետների ռիսկերի նվազեցման և աղետներին դիմակայելու մշակույթի մեկնարկային կետը պայմանավորված է վտանգների մասին իմացությամբ և հասարակությունների մեծ մասում հանդիպող աղետի նկատմամբ ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և միջավայրային խոցելի գործոններով, ինչպես նաև նրանով, թե ինչպես են վտանգները ու խոցելիությունը փոխվում կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Սրան հետևում են առկա գիտելիքների հիման վրա ձեռնարկված քայլերը:

*Առանցքային գործողությունները*

(i) *Ազգային և տեղական մակարդակներով ռիսկերի գնահատումներ*

ա) Մշակել, պարբերաբար թարմացնել և համապատասխան ձևաչափով որոշում կայացնողների, ռիսկի ենթակա[11] հասարակության և համայնքների շրջանում լայնորեն տարածել ռիսկային քարտեզները և համապատասխան տեղեկատվությունը:

բ) Ազգային և ենթազգային մասշտաբներով մշակել աղետների ռիսկերի և խոցելիության ցուցանիշների համակարգ, որը որոշում կայացնողներին կօգնի գնահատելու աղետի թողած հետևանքները սոցիալական, տնտեսական և բնապահպանական պայմանների վրա[12] և դրանք տարածել որոշում կայացնողների, ռիսկի ենթակա բնակչության և հասարակության շրջանում:

գ) Կանոնավորապես գրանցել, վերլուծել, ամփոփել և միջազգային, տարածաշրջանային, պետական և տեղական լծակների միջոցով տարածել աղետների իրադարձությունների, հետևանքների և կորուստների մասին վիճակագրական տեղեկատվություն:

(ii) *Վաղ ազդարարում*

դ) Ստեղծել մարդկանց ուղղված վաղ ազդարարման այնպիսի համակարգեր, որոնց արձակած ահազանգերը ժամանակային առումով տեղին են և ընկալելի նրանց համար, ովքեր գտնվում են ռիսկի գոտում, և որոնք հաշվի են առնում մարդկանց խմբերի ժողովրդագրական, գենդերային, մշակութային և կենսամիջոցների առանձնահատկությունները, ներառյալ ահանգանգ ստանալու դեպքում ձեռնարկվող քայլերի վերաբերյալ ուղեցույցները, որոնք նպաստում են ռիսկի կառավարիչների և այլ որոշում կայացնողների արդյունավետ գործունեությանը:

ե) Որպես վաղ ազդարարման համակարգերի մաս՝ ստեղծել տեղեկատվական համակարգեր, պարբերաբար ուսումնասիրել և թարմացնել դրանք՝ ահազանգի/վթարի դեպքում արագ և համակարգված գործողությունների ծավալումն ապահովելու հեռանկարով:

զ) Ստեղծել ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք երաշխավորեն, որ վաղ ազդարարման համակարգերը, ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներով, ամուր ներառված են կառավարության քաղաքականության, որոշումների կայացման գործընթացների և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի մեջ՝ ենթարկվելով պարբերական համակարգային փորձարկումների և կատարողական ցուցանիշների գնահատումների:

է) Իրականացնել Բոննում (Գերմանիա) 2003 թվականին կայացած վաղ ազդարարման թեմայով երկրորդ միջազգային համաժողովի[13] հանձնարարականները, ներառյալ՝ վաղ ազդարարման համակարգերի լիարժեք արդյունավետությունը երաշխավորելու նպատակով այդ համակարգի բոլոր ճյուղերի և դերակատարների միջև համակարգման և համագործակ-

---

11 Տե՛ս «Գործողությունների ծրագրի» տողատակի 1-ին, 2-րդ և 3-րդ ծանոթագրությունները

12 Տե՛ս տողատակի 1-ին, 2-րդ և 3-րդ ծանոթագրությունները

13 Ինչպես խորհուրդ է տրվում Գլխավոր ասամբլեայի թիվ 58/214 բանաձևում:

ցության ամրապնդումը:

ը) Իրագործել փոքր կղզի պետությունների կայուն զարգացման ապահովման Բարբադոսի գործողությունների ծրագրի շարունակությունը հանդիսացող Մավրիկիոսի ռազմավարության արդյունքները՝ ստեղծելով և ուժեղացնելով վաղ ազդարարման համակարգեր և ձեռնարկելով աղետների նվազեցման ու արձագանքման այլ միջոցներ:

*(iii) Կարողություններ*

թ) Նպաստել բնական աղետների ուսումնասիրություններ, դիտարկումներ, վերլուծություններ, քարտեզագրում, հնարավորության դեպքում նաև բնական աղետների, խոցելի գործոնների և աղետների հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ անելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների, գիտական, տեխնոլոգիական, տեխնիկական կարողությունների ստեղծմանն ու կայուն գործունեությանը:

ժ) Նպաստել անհրաժեշտ տվյալների շտեմարանների ստեղծմանն ու դրանց կատարելագործմանը, ինչպես նաև գնահատման, վերահսկման և վաղ ազդարարման նպատակներով միջազգային, տարածաշրջանային, պետական և տեղական մակարդակներով տվյալների ազատ փոխանակմանը:

ի) Ուսումնասիրությունների, գործընկերության, ուսուցման և տեխնիկական կարողությունների զարգացման միջոցով նպաստել ռիսկի գնահատման, վերահսկողության, վաղ ազդարարման գիտատեխնիկական մեթոդների և կարողությունների բարելավմանը: Զարգացնել երկրի տեղանքային և տիեզերական ուսումնասիրությունների, տիեզերական տեխնոլոգիաների, արբանյակային հետազոտությունների, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, վտանգների մոդելավորման և կանխատեսման, եղանակի, կլիմայի մոդելավորման, կանխատեսման և հաղորդակցության միջոցների կիրառելիությունը, ինչպես նաև ռիսկի ծախսարդյունավետության ուսումնասիրությունն ու վաղ ազդարարման համակարգերը:

լ) Ստեղծել և ամրապնդել վիճակագրական տվյալների, վտանգների քարտեզագրման, դրանց ռիսկերի, հետևանքների և կորուստների մասին գրանցումների, վերլուծությունների, ամփոփման և փոխանակման կարողությունները, ինչպես նաև օժանդակել ռիսկի գնահատման և մոնիթորինգի ընդհանրական մեթոդների մշակմանը:

*(iv) Տարածաշրջանային և ձևավորվող ռիսկեր*

խ) Ըստ նպատակահարմարության՝ հավաքել և ստանդարտացնել տարածաշրջանային աղետների ռիսկերի, հետևանքների և կորուստների մասին վիճակագրական տեղեկություններն ու տվյալները:

ծ) Ըստ նպատակահարմարության՝ հաստատել տարածաշրջանային և միջազգային համագործակցություն՝ տարածաշրջանային և անդրսահմանային աղետների գնահատման և վերահսկման, տեղեկատվության փոխանակման և համապատասխան կարգադրությունների (օրինակ, ի թիվս այլոց, գետերի ավազանների կառավարմանը վերաբերող կարգադրությունների) միջոցով վաղ ազդարարման նպատակով:

կ) Ուսումնասիրել, վերլուծել երկարաժամկետ փոփոխությունները և զեկուցել դրանց և ծագող խնդիրների մասին, որոնք կարող են բարձրացնել խոցելիության և ռիսկերի մակարդակը, կամ իշխանությունների և համայնքների՝ աղետներին արձագանքելու կարողությունները:

**3. Օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը բոլոր մակարդակներով անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար**

18. Աղետները կարող են զգալիորեն նվազեցվել, եթե մարդիկ փաջստեղյակ լինեն և տեղեկացված աղետները կանխելու և դրանց դիմակայելու մշակույթի հարցում, որն իր հերթին

դաստիարակում է ազետների, խոցելիության և կարողությունների մասին համապատասխան գիտելիքի և տեղությունների հավաքում և սփռում:

*Առանցքային գործողություններ*

*(i) Տեղեկատվության կառավարում և փոխանակում*

ա) Բարձր ռիսկային գոտիներում մարդկանց տրամադրել աղետների ռիսկերի և պաշտպանական միջոցառումների մասին մատչելի և հասկանալի տեղեկատվություն, որպեսզի վերջիններս կարողանան ռիսկի նվազեցմանն ուղղված քայլեր ձեռնարկել և ձևավորել դիմակայման ունակություններ: Այդ տեղեկատվությունը պետք է համապատասխանաբար ներառի ավանդական և տեղական իմացություններն ու մշակութային ժառանգությունը և նախատեսված լինի տարբեր թիրախային խմբերի համար՝ հաշվի առնելով տարբեր մշակութային և սոցիալական գործոնները:

բ) Ուժեղացնել բոլոր ճյուղերի և տարածաշրջանների աղետների գծով փորձագետների, կառավարիչների և պլանավորողների միջև կապերը և մշակել գործակալությունների կամ այլ կարևոր մասնակիցների կողմից ռիսկի նվազեցման տեղական պլանների կազմման ընթացքում կուտակված փորձագիտական իմացությունից օգտվելու ընթացակարգեր կամ բարելավել արդեն գոյություն ունեցող ընթացակարգերը:

գ) Խթանել և ամրապնդել աղետների ռիսկի նվազեցման հարցերով զբաղվող գիտական համայնքների և արհեստավարժների միջև երկխոսությունը և խրախուսել շահագրգիռ կողմերի, ինչպես նաև աղետի նվազեցման սոցիալ-տնտեսական ոլորտում ներգրավված աշխատակազմերի միջև գործընկերության ձևավորումը:

դ) Աղետների նվազեցման գործընթացին նպաստելու նպատակով խթանել թարմ տեղեկությունների, հաղորդումների, տիեզերական տեխնոլոգիաների և հարակից ծառայությունների օգտագործումը, կիրառությունը և հանրամատչելիությունը հասկաղես ուսուցման կազմակերպման և տաբեր կատեգորիաների օգտագործողների միջև տեղեկատվության փոխանակման ոլորտներում:

ե) Միջնաժամկետ հեռանկարում ստեղծել տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային օգտագործողին մատչելի տեղեկատուներ, գույքագրացանկեր և տեղեկատվության փոխանակման ազգային համակարգեր և ծառայություններ, որոնց նպատակը ռիսկի նվազեցման լավագույն փորձի, ծախսարդյունավետ և հեշտ օգտագործվող տեխնոլոգիաների մասին տեղեկատվության, ինչպես նաև ռիսկի նվազեցման քաղաքականություններից, պլաններից և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցներից քաղված դասերի փոխանակումն է:

զ) Նախքան շինարարական աշխատանքներ սկսելը, հողի առք ու վաճառքը քաղաքաշինության ոլորտի հաստատությունները պետք է հանրությանը աղետների նվազեցման այլընտրանքային տարբերակների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնեն:

է) Թարմացնել աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող միջազգային ստանդարտ տերմինաբանությունը ծրագրերի մշակման և հաստատությունների զարգացման, ինչպես նաև գործողությունների, հետազոտությունների, ուսումնական և հանրության իրազեկման ծրագրերում օգտագործման նպատակով և լայնորեն տարածել այն առնվազն ՄԱԿ-ի բոլոր պաշտոնական լեզուներով

*(ii) Կրթություն և ուսուցում*

ը) Խրախուսել աղետների ռիսկերի նվազեցմանը վերաբերող ուսումնական նյութերի ընդգրկումը դպրոցների ուսումնական ծրագրերի համապատասխան բաժիններում, ինչպես նաև պաշտոնական և ոչ պաշտոնական այլ աղբյուրների օգտագործումը՝ տեղեկատվությունը երիտասարդությանն ու երեխաներին մատչելի դարձնելու նպատակով: Նպաստել Միավորված ազգերի կազմակերպության «Կրթությունը հանուն կայուն զարգացման. 2005–2015 թթ. տասնամյակ» ծրագրում աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչի ընդգրկմանը:

բ) Խրախուսել դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղական ռիսկերի գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ ծրագրերի իրականացումը:

ժ) Խրախուսել դպրոցներում այնպիսի ծրագրերի և գործընթացների իրականացումը, որոնց նպատակն է ուսուցանել, թե ինչ պետք է անել վտանգների ազդեցությունները նվազեցնելու համար:

ի) Մշակել աղետների ռիսկերի նվազեցման կրթական և ուսուցողական ծրագրեր, որոնք նախատեսված են առանձին ոլորտների մասնագետների, ներառյալ` նախագծողների, արտակարգ իրավիճակների կառավարման մասնագետների, տեղական կառավարման մարմինների պաշտոնյաների և այլոց համար:

լ) Խրախուսել համայնքներում ուսուցողական նախաձեռնությունների իրականացման գործընթացները` ինչպես հարկն է հաշվի առնելով կամավորների դերը աղետների հետևանքները վերացնելու տեղական կարողությունների մեծացման գործում:

խ) Ապահովել կրթական և ուսուցողական ծրագրերին կանանց և խոցելի խմբերի համահավասար մասնակցությունը: Խթանել գենդերային և մշակութային զգայուն հարցերի ուսուցումը` որպես աղետների ռիսկերի ոլորտում կրթության և ուսուցման բաղկացուցիչ մաս:

*(iii) Հետազոտություններ*

ծ) Մշակել բոլոր մակարդակներով ռիսկերի նվազեցման գործողությունների կանխատեսելի բազմառիսկային գնահատումների և սոցիալ-տնտեսական ծախսարդյունավետության վերլուծությունների կատարելագործված մեթոդներ և օգտագործել դրանք տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներով:

կ) Խոցելիությունը և երկրաբանական, եղանակային, ջրային և կլիմայի հետ կապված վտանգների ազդեցությունները, ինչպես նաև տարածաշրջանային մոնիթորինգի կարողությունների բարելավումները գնահատելու նպատակով ամրապնդել մեթոդներ, ուսումնասիրություններ և մոդելներ մշակելու և կիրառելու տեխնիկական և գիտական կարողությունները:

*(iv) Հանրային իրազեկություն*

հ) Աղետներին դիմակայելու մշակույթը բարձրացնելու և երկարաժև ուսումնական ծրագրերում հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը խթանելու նպատակով խրախուսել զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը:

## 4. Նվազեցնել հիմնային ռիսկի գործոնները

19. Ճյուղային զարգացման պլաններում և ծրագրերում, ինչպես նաև հետաղետային շրջանում հարկ է անդրադառնալ սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի, հողօգտագործման պայմանների փոփոխությունների հետ կապված աղետների ռիսկերին և երկրաբանական երևույթներով, եղանակային, ջրային, կլիմայի փոփոխականությամբ և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված վտանգներին:

*Առանցքային գործողություններ*

*(i) Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարում*

ա) Նպաստել էկոհամակարգերի կայուն օգտագործմանն ու կառավարմանը, նաև ռիսկը և խոցելիությունը նվազեցնելու նպատակով հողօգտագործման առավել արդյունավետ պլանավորման և զարգացման գործողությունների միջոցով:

բ) Իրագործել շրջակա միջավայրի և ռեսուրսների կառավարման այնպիսի համալիր մոտեցումներ, որոնք հաշվի են առնում աղետների ռիսկերի նվազեցումը, ներառյալ` կառուց-

վածքային և ոչ կառուցվածքային միջոցները,[14] որոնց շարքն են դասվում ջրհեղեղների համալիր կառավարումը և փխրուն էկոհամակարգերի պատշաճ կառավարումը:

գ) Խրախուսել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարությունների մեջ կլիմայի փոփոխականության և սպասվող կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման միջոցների ընդգրկումը, ներառյալ՝ կլիմայական ռիսկերի հստակ վերհանումը, ռիսկի նվազեցման առանձնահատուկ միջոցների ձևակերպումը և ոլորտային մասնագետների, ճարտարագետների և այլ որոշում կայացնողների շրջանում կլիմայական ռիսկերին վերաբերող տեղեկությունների բարելավված և կանոնավոր կիրառումը:

*(ii) Սոցիալական և տնտեսական զարգացման գործողություններ*

դ) Որպես աղետների նկատմամբ համայնքների դիմադրողականության ապահովման կարևոր գործոն՝ խրախուսել սննդային անվտանգության ապահովումը հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առկա են երաշտների, ջրհեղեղների և ցիկլոնների վտանգներ, որոնք կարող են բացասական անդրադառնալ գյուղատնտեսության վրա հիմնված կենսամիջոցների վրա:

ե) Աղետների ռիսկերի նվազեցման պլանները ընդգրկել առողջապահության ոլորտում: Հետամուտ լինել «աղետների ազդեցություններից զերծ հիվանդանոցներ» ունենալու նպատակին՝ երաշխավորելով, որ բոլոր նոր կառուցվող հիվանդանոցները ունենան աղետներին դիմակայելու այնպիսի հատկանիշներ, որոնց շնորհիվ կարող են գործել նաև աղետային իրավիճակներում: Բուժհիմնարկները, հատկապես առաջնային օգնության բուժհիմնարկները ամրացնելու նպատակով իրականացնել մեղմացնող միջոցառումներ:

զ) Պատշաճ նախագծման, վերազինման և վերակառուցման միջոցով պահպանել և ուժեղացնել հասարակության համար վճռական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները ու հիմնարկները, մասնավորապես դպրոցները, կլինիկաները, հիվանդանոցները, ջրմուղները, էլեկտրակայանները, հաղորդակցության և տրանսպորտի կենսական կարևորություն ունեցող գծերը, աղետների ահազանգման և կառավարման կենտրոնները, մշակութային կարևոր նշանակություն ունեցող տարածքները՝ նրանց աղետների նկատմամբ դիմացկուն դարձնելու նպատակով:

է) Բարելավել աղքատներին, ծերերին, հաշմանդամներին և բնակչության այլ խմբերին օգնելու համար նախատեսված սոցիալական ապահովության ցանցային մեխանիզմների կիրառությունը: Ամրապնդել վերականգնման ծրագրերը, սոցիալ-հոգեբանական ուսումնական ծրագրերը՝ նպատակ ունենալով մեղմացնել հետաղետային գոտիներում խոցելի բնակչության, հատկապես երեխաների կրած հոգեբանական հարվածը:

ը) Աղետների ռիսկերի նվազեցման միջոցները ընդգրկել հետաղետային վերականգնման և վերականգնողական գործընթացներում[15] և վերականգնման փուլում օգտագործել երկարաժամկետ հեռանկարում ռիսկերի նվազեցման կարողություններ ձևավորելու բոլոր հնարավորությունները, այդ թվում՝ փորձի, գիտելիքների, քաղված դասերի փոխանակման միջոցով:

թ) Ըստ անհրաժեշտության երաշխավորել, որ տեղահանված անձանց համար նախատեսված ծրագրերը չեն ավելացնի վտանգների ռիսկը և խոցելիությունը:

ժ) Բարձր ռիսկային գոտիներում վտանգների նկատմամբ բնակչության խոցելիությունը

14 «Կառուցվածքային միջոցների մեջ մտնում են վտանգների հնարավոր ազդեցությունները նվազեցնող կամ կանխող ֆիզիկական կառույցները, ներառյալ ճարտարագիտական միջոցները և վտանգադիմացկուն և պաշտպանիչ կառույցների և ենթակառուցվածքների շինարարությունը: Ոչ կառուցվածքային միջոցների շարքն են դասվում ճյուղային քաղաքականությունը, հանրային իրազեկության մակարդակը, գիտելիքի զարգացումը, դեսական համաձայնությունը, մեթոդները, գործնական փորձը, մասնակցային մեխանիզմները և տեղեկությունների տրամադրումը, որոնք կարող են նվազեցնել ռիսկը և հարակից ազդեցությունները» (ՄԱԿ/ԱՄՆԿ, Ժնև, 2004):

15 Համաձայն Գլխավոր ասամբլեայի թիվ 46/182 բանաձևում ամփոփված սկզբունքների:

նվազեցնելու նպատակով խրախուսել բնակչության եկամուտների ստացման աղբյուրների բազմազանությունը և երաշխավորել, որ նրանց եկամուտներն ու ունեցվածքը չեն տուժի այնպիսի զարգացման հաղաղակության և գործընթացների հետևանքով, որոնք ավելացնում են աղետների նկատմամբ խոցելիությունը:

թ) Խրախուսել ֆինանսական ռիսկի բաշխման մեխանիզմների, մասնավորապես՝ աղետներից ապահովագրման և վերաապահովագրման սխեմաների ձևավորումը:

ժ) Աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներում մասնավոր հատվածի առավել լավ ընդգրկման համար նպաստել պետական-մասնավոր գործընկերությունների ստեղծմանը: Խրախուսել մասնավոր հատվածի կազմակերպություններին, որպեսզի ձևավորեն աղետների կանխարգելման մշակույթ՝ շեշտը դնելով և ռեսուրսներ հատկացնելով նախաաղետային այնպիսի աշխատանքների, ինչպիսիք են ռիսկի գնահատումը և վաղ ազդարարման համակարգերը:

ի) Աղետների ռիսկերին հակազդելու համար ստեղծել և խթանել այլընտրանքային և նորարարական ֆինանսական գործիքների կիրառությունը:

*(iii) Հողօգտագործման պլանավորում և այլ տեխնիկական միջոցներ*

լ) Աղետների ռիսկերի գնահատումն ընդգրկել աղետավտանգ և հատկապես խիտ բնակեցված և արագ աճող բնակավայրերի հաղաճշինության ծրագրերի և կառավարման պլաններում: Ապօրինի շինությունների և ժամանակավոր կացարանների, ինչպես նաև աղետավտանգ գոտիներում գտնվող տների խնդիրները պետք է համարվեն առաջնահերթության կարգով լուծման ենթակա խնդիրներ և ընդգրկվեն հաղաքային աղքատության հաղթահարման և հետնախորշերի մաքրման ծրագրերում:

խ) Աղետների ռիսկերի գործոնները, ներառյալ՝ նախագծման, նախագծերի հաստատման և դրանց իրականացման չափանիշները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գնահատումների վրա հիմնված նկատառումները պետք է ընկած լինեն հիմնական ենթակառուցվածքների նախագծման աշխատանքների հիմքում:

ծ) Հողօգտագործման հաղաքականության և պլանավորման համատեքստում մշակել, բարելավել և խրախուսել ռիսկի նվազեցման ուղեցույցների և մոնիթորինգային միջոցների կիրառությունը:

կ) Աղետների ռիսկի գնահատումներն ընդգրկել գյուղական, մասնավորապես՝ լեռնային և ափամերձ բնակավայրերի զարգացման պլանավորման և կառավարման մեջ, ինչպես նաև որոշել այն տարածքները, որոնք անվտանգ են բնակեցման համար:

հ) Խրախուսել գոյություն ունեցող շինարարական օրենսգրքերի և չափորոշիչների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, պետական և տեղական մակարդակներով վերականգնողական և վերակառուցողական գործունեության վերանայումը կամ նորերի մշակումը՝ դրանք տեղական համատեքստում, մասնավորապես՝ ոչ պաշտոնական կամ մարգինալ խմբերի բնակավայրերում ավելի կիրառելի դարձնելու նպատակով: Փոխհամաձայնության մոտեցման հիման վրա ամրապնդել այդ օրենսգրքերի պահանջները կատարելու, վերահսկելու և կիրարկելու կարողությունները՝ նպատակ ունենալով խրախուսել աղետներին դիմակայելու հատկություններ ունեցող կառույցների շինարարությունը:

**5. Բոլոր մակարդակներով բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստվածությունը**

20. Աղետների ազդեցությունները ու կորուստները կարող են էապես նվազեցվել, եթե աղետավտանգ տարածքների կառավարման մարմինները, անհատներն ու համայնքները լինեն գործելու համար լավ պատրաստված և զինված աղետների կառավարման անհրաժեշտ գիտելիքներով և կարողություններով:

ա) Հզորացնել աղետների տարածաշրջանային, ազգային և տեղական կառավարման քաղաքականությունը, տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունները, ներառյալ՝ տեխնոլոգիայի, ուսուցման և մարդկային ռեսուրսների հետ կապված կարողությունները:

բ) Խրախուսել և օժանդակել վաղ ազդարարման, աղետների ռիսկերի նվազեցման, աղետներին արձագանքելու, զարգացման և այլ համապատասխան ոլորտներում գործող բոլոր մակարդակների կազմակերպությունների միջև երկխոսության հաստատմանը, տեղեկատվության փոխանակմանը և համակարգմանը և օժանդակել նրանց, որպեսզի ձևավորեն աղետների ռիսկի նվազեցման ամբողջական մոտեցում:

գ) Ամրապնդել համակարգված տարածաշրջանային մոտեցումները, անհրաժեշտության դեպքում ձևավորելով այդպիսի մոտեցումներ: Մշակել կամ բարեփոխել տարածաշրջանային քաղաքականությունները, օպերատիվ մեխանիզմները, պլանները ու հաղորդակցության համակարգերը՝ աղետների արդյունավետ արձագանքման գործողություններին պատրաստ լինելու, ինչպես նաև ազգային կարողությունները գերազանցող աղետներին պատշաճ արձագանքելու համար:

դ) Բոլոր մակարդակներով պատրաստել կամ վերանայել և պարբերաբար թարմացնել աղետների պատրաստվածության և պատահական իրավիճակների/իրադարձությունների կապակցությամբ գործողությունների պլանները ու քաղաքականությունը՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահելով խոցելի տարածքներն ու խմբերը: Խթանել աղետների պատրաստվածությանն ուղղված կանոնավոր վարժանքները, ներառյալ՝ տարհանման կազմակերպման վարժությունները, որոնց նպատակն է երաշխավորել, որ աղետների առաջացման դեպքում ձեռնարկվելու են արագ և արդյունավետ պատասխան քայլեր և ըստ անհրաժեշտության՝ տրամադրվելու է պարենային կամ այլ օգնություն:

ե) Անհրաժեշտության դեպքում խթանել արտակարգ իրավիճակների հիմնադրամների ստեղծումը՝ նպատակ ունենալով սատարել արձագանքման, վերականգնման և ուսուցման միջոցառումներին:

զ) Մշակել հատուկ մեխանիզմներ հասկաղես կամավորական հիմունքներով համապատասխան շահագրգիռ կողմերին, ներառյալ՝ համայնքներին աղետների ռիսկերի նվազեցման գործողություններում ներգրավելու համար:

# IV. Իրականացում և հետագա գործողություններ

## Ա. Ընդհանուր դրույթներ

21. Գործողությունների ծրագրում սահմանված ռազմավարական նպատակները, առաջնային քայլերը և հետագա գործողությունները պետք է իրականացվեն տարբեր մասնակիցների, ներառյալ՝ զարգացման ոլորտի կազմակերպությունների կողմից՝ բազմաճյուղային մոտեցման հիման վրա: Պետություններին, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին, ներառյալ՝ Միավորված ազգերի կազմակերպությանը և միջազգային ֆինանսական հաստատություններին կոչ է արվում աղետների ռիսկերի նվազեցման հարցերը բոլոր մակարդակներով ընդգրկել իրենց կայուն զարգացման քաղաքականություններում, պլաններում և ծրագրերում: Քաղաքացիական հասարակությունը, կամավորները և համայնքային կազմակերպությունները, գիտական համայնքը և մասնավոր հատվածը հանդիսանում են կարևոր մասնակիցներ, որոնք օժանդակում են աղետների ռիսկերի նվազեցման աշխատանքների բոլոր մակարդակներով իրականացմանը:

22. Թեև յուրաքանչյուր պետություն առաջնահերթ պատասխանատվություն է կրում իր տնտեսական և սոցիալական զարգացման համար, կարողունակ դարձնող միջազգային միջավայրը կենսական նշանակություն ունի ազգերի և համայնքների դիմացկունության ձևավորման նպատակով համապատասխան գիտելիքների, կարողությունների, ինչպես նաև շահագրգռվածության խթանման և զարգացման համար: Հիմք ընդունելով էլ ավելի ամրապնդված Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը` պետությունները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները պետք է խթանեն ռազմավարական ավելի մեծ համագործակցությունը ՄԱԿ-ի, աղետների ռիսկերի նվազեցման մեջ ներգրավված տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների միջև, ներառյալ` միջազգային ֆինանսական կազմակերպությունները, տարածաշրջանային մարմինները, դոնոր գործակալությունները և հասարակական կազմակերպությունները: Գալիք տարիների ընթացքում ուշադրություն պետք է դարձվի աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի միջազգային իրավական փաստաթղթերի իրականացմանը և կատարելագործմանը:

23. Պետությունները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները պետք է սատարեն տարածաշրջանային և միջազգային մեխանիզմների և կազմակերպությունների միջոցով ցանցերի ձևավորման, քարոզչության, համակարգման, տեղեկությունների և փորձի փոխանակման, պտանգների և խոցելիության գիտական մոնիթորինգի, ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման և աղետների ռիսկերի դիմակայման ոլորտներում պլաններ, քաղաքականություն և ընդհանուր գործելակերպ մշակելու կարողություններին:

24. Բոլոր մակարդակներով խրախուսվում է դերակատարների միջև բազմակողմ գործընկերության հաստատումը և կամավորական հիմունքներով «Գործողությունների ծրագրի» իրականացման աշխատանքներին մասնակցությունը: Խրախուսվում է նաև պետությունների ու մյուս դերակատարների կողմից ազգային, տարածաշրջանային և միջազգային կամավորական կորպուսների ստեղծումը կամ հզորացումը: Վերջիններս կարող են ներդրում ունենալ պետություններում և միջազգային համայնքում խոցելիության և աղետների ռիսկերի[16] նվազեցման գործողություններում:

25. Փոքր կղզի զարգացող պետություններում Բարբադոսի ծրագրի հետագա իրականացման համար Մավրիկիոսի ռազմավարության մեջ ընդգծված է, որ փոքր կղզի զարգացող պետությունները տեղակայված են բնական և շրջակա միջավայրի աղետների, դրանց հաճախականության ու ուժգնության առումով աշխարհի ամենախոցելի տարածաշրջաններում և բախվում են անհամեմատ մեծ տնտեսական, սոցիալական և միջավայրային հետևանքների: Փոքր կղզի զարգացող պետությունները հանձն են առել ամրապնդել աղետների արդյունավետ կառավարման իրենց համապատասխան ազգային ծրագրերը և միջազգային հանրության անհրաժեշտ օժանդակությամբ բարելավել աղետների մեղմացման, աղետների պատրաստվածության և վաղ ազդարարման կարողությունների ստեղծման, աղետների նվազեցման հարցերի մասին հանրային իրազեկության մակարդակի բարձրացման, բազմադիսցիպլինային և միջճյուղային գործընկերության խթանման, պետական պլանավորման գործընթացում ռիսկի կառավարման ընդգրկման, ապահովագրական և վերաապահովագրական միջոցառումների իրականացման ժամանակ ծագող հարցերի լուծման և արտակարգ իրավիճակների (ներառյալ բնական և շրջակա միջավայրի աղետների պատճառով մարդկային բնակավայրերին վնաս հասցնող արտակարգ իրավիճակների) կանխատեսման և դրանց արձագանքելու իրենց կարողությունները, ներառյալ նաև բնական և շրջակա միջավայրի աղետներից բնակավայրերի պահպանությունը:

26. Հաշվի առնելով նվազ զարգացած երկրների խոցելիությունը, ինչպես նաև աղետներին արձագանքելու և վերականգնվելու անբավարար կարողությունները, առաջին հերթին այս երկրներին պետք է օգնել Գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում իրա-

16 Համաձայն Գլխավոր ասամբլեայի թիվ 58/118 բանաձևի և «Ամերիկյան պետությունների կազմակերպության» թիվ 2018 (xxxiv-0/04) բանաձևի

գործելու հիմնարար ծրագրեր և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ նրանց ֆինանսական և տեխնիկական օժանդակություն հասկացնելու և առաջին հերթին աղետների ռիսկերի նվազեցման կարողությունների զարգացման միջոցով աղետները կանխելու նպատակով:

27. Աֆրիկյան մայրցամաքում տեղի ունեցող աղետները, հաշվի առնելով այս տարածաշրջանի անբավարար կարողությունները աղետների վերաբերյալ կանխատեսումներ անելու, դրանց նկատմամբ մոնիթորինգ սահմանելու և դրանք մեղմացնելու հարցում, զգալիորեն խոչընդոտում են աֆրիկյան մայրցամաքում կայուն զարգացման գործընթացները: Վտանգների նկատմամբ աֆրիկյան ժողովուրդների խոցելիության նվազեցումը աղքատության հաղթահարման ռազմավարությունների, ինչպես նաև զարգացման ոլորտում նախկինում արձանագրված հաջողությունների պահպանման անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է: Աֆրիկյան երկրների կարողությունների, ներառյալ՝ աղետների դիտարկման և վաղ ազդարարման համակարգերի, գնահատման, կանխարգելման, արձագանքման, պատրաստականության և վերականգնման կարողությունները ամրապնդելու գործում ֆինանսական և տեխնիկական օժանդակության կարիք է զգացվում:

28. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովից հետո ձեռնարկվելիք քայլերը, ըստ նպատակահարմարության, պետք է ներառվեն և համակարգվեն աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում տեղի ունեցած այլ խոշոր համաժողովներից հետո ձեռնարկված քայլերի հետ միասին[17]: Հատուկ անդրադարձ պետք է արվի զարգացման նպատակների, ներառյալ «Հազարամյակի հռչակագրում» սահմանված նպատակների տեսանկյունից աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում տեղի ունեցած առաջընթացին:

29. 2005-2015 թվականների համար նախատեսված այս Գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները հավուր պատշաճի ենթարկվելու են վերանայման:

## Բ. Պետություններ

30. Դրսևորելով սեփականատիրության ուժեղ զգացում և համագործակցելով քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ, բոլոր պետությունները, հաշվի առնելով աղետների ռիսկերի նվազեցման հետ կապված տեղական պահանջները և գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերը, պետք է ձգտեն իրենց ֆինանսական միջոցների, մարդկային և նյութական ռեսուրսների սահմաններում պետական և տեղական մակարդակներով իրականացնել հետևյալ առաջադրանքները: Համաձայն 33-րդ և 34-րդ պարբերությունների՝ պետությունները պետք է ակտիվորեն իրենց ավանդը ներդնեն տարածաշրջանային և միջազգային համագործակցության մեջ:

ա) Պատրաստել և հրապարակել աղետների ռիսկերի նվազեցման կարգավիճակի պետական բազային գնահատման արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր պետության կարողությունների, քաղաքականության ու կարիքների և անհրաժեշտության դեպքում այս տեղեկությունները տրամադրել շահագրգիռ տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին:

բ) Գործողությունների ծրագրի իրականացման և դրա ընթացքին հետևելու նպատակով մշակել ազգային համակարգման մեխանիզմներ և տեղեկությունները տրամադրել Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության քարտուղարությանը:

գ) Հրապարակել և պարբերաբար թարմացնել սույն Գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող աղետների նվազեցման ազգային և միջազգային համագործակցության ծրագրերի ամփոփագրերը:

դ) Գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ ազգային առաջընթացի

17 Ինչպես նշվել է Գլխավոր ասամբլեայի թիվ 57/270 B բանաձևում:

վերանայման համար մշակել ընթացակարգեր, որոնք ներառում են ծախսարդյունավետության վերլուծության, ընթացիկ վերահսկողության, ռիսկերի և խոցելիության գնահատման համակարգեր հասկանալու այն տարածաշրջանների համար, որոնք գտնվում են ջրօդերևութաբանական և սեյսմավտանգ գոտիներում:

ե) Աղետների ռիսկերի նվազեցման առաջընթացին վերաբերող տեղեկատվությունն ընդգրկել կայուն զարգացման առկա միջազգային և այլ ծրագրերի զեկույցներում:

զ) Ըստ նպատակահարմարության՝ քննարկել աղետների նվազեցման միջազգային համաձայնագրերին միանալու, դրանք հաստատելու և վավերացնելու հարցերը, ինչպես նաև այդ համաձայնագրերի անդամ լինելու դեպքում ձեռնարկել դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ միջոցառումներ[18]:

է) Խթանել կլիմայի առկա և հեռագա փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցման խնդիրների ընդգրկումն աղետների ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարությունների մեջ: Երաշխավորել, որ երկրաբանական վտանգները, ինչպիսիք են երկրաշարժերն ու սողանքները, լիովին հաշվի կառնվեն աղետների ռիսկերի նվազեցման ծրագրերում:

## Գ. Տարածաշրջանային կազմակերպություններ և հաստատություններ

31. Աղետների ռիսկերի նվազեցմամբ զբաղվող տարածաշրջանային կազմակերպությունները կոչված են իրենց մանդատների, առաջնայնությունների և ռեսուրսների սահմաններում իրականացնելու հետևյալ առաջադրանքները.

ա) Գործողությունների ծրագրի նպատակներին ուղղված ազգային և տարածաշրջանային ջանքերին օժանդակելու նպատակով խթանել տարածաշրջանային ծրագրերը, ներառյալ տեխնիկական համագործակցության, կարողությունների զարգացման, վտանգների և խոցելիության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունների և չափորոշիչների մշակման, տեղեկատվության փոխանակման և ռեսուրսների արդյունավետ համախմբման ծրագրերը:

բ) Իրենց մանդատների սահմաններում որոշված կարիքների հիման վրա անցկացնել տարածաշրջանային և ենթատարածաշրջանային աղետների ռիսկերի նվազեցման բազային գնահատումներ, ինչպես նաև հրապարակել այդ գնահատումների արդյունքները:

գ) Համակարգել և հրապարակել տարածաշրջանում առաջընթացի, խոչընդոտների և օժանդակության կարիքների վերաբերյալ պարբերական վերանայումները և ըստ պահանջի՝ օգնել երկրներին իրենց ծրագրերի, դրանց առաջընթացի վերաբերյալ ամփոփագրերի մշակման գործում:

դ) Ստեղծել կամ ամրապնդել գոյություն ունեցող տարածաշրջանային համագործակցության կենտրոնները՝ աղետների ռիսկերի ոլորտում հետազոտությունների, դասընթացների, կրթության և կարողությունների իրականացման նպատակով:

ե) Օժանդակել աղետների, ներառյալ՝ ցունամիների վաղ ազդարարման համակարգերի տարածաշրջանային մեխանիզմների և կարողությունների զարգացմանը[19]:

18 Ինչպես, օրինակ՝ «Աղետների մեղմացման և փրկարարական գործողությունների համար հեռահաղորդակցության ռեսուրսների մասակարարման մասին» Տամպերի կոնվենցիան (1998 թ.), որն ուժի մեջ է մտել 2005 թ հունվարի 8-ին:

19 Գլխավոր քարտուղարի կողմից ստեղծված Միավորված ազգերի կազմակերպության Ջրի և կոյուղու գծով խորհրդատվական մարմինը հրատապ կոչ է արել մինչև 2015թ կիսով չափ կրճատել ջրային աղետների, այդ թվում ցունամիի զոհերի թվակը:

## Դ. Միջազգային կազմակերպություններ

32. Միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի կազմակերպություններն ու միջազգային ֆինանսական հաստատություններն իրենց մանդատների, առաջնայնությունների և ռեսուրսների շրջանակներում կոչված են իրականացնելու հետևյալ առաջադրանքները.

ա) Ամբողջությամբ ներգրավվել աղետների նվազեցման միջազգային ռազմավարության օժանդակության և իրականացման գործողություններում: Համագործակցել աղետների նկատմամբ դիմացկուն ազգեր և համայնքներ ձևավորելու նպատակով համալիր մոտեցումներ մշակելու ուղղությամբ՝ ամուր կապերը և հետևողականությունը խրախուսելու, աղետների ռիսկի նվազեցման, մարդասիրական և կայուն զարգացման ոլորտների ծրագրերի և գործողությունների մեջ ներառելու միջոցով, ինչպես և նշված է Գործողությունների ծրագրում:

բ) Համապատասխան միջոցների և համակարգման միջոցով ուժեղացնել Միավորված ազգերի կազմակերպության համակարգերի՝ աղետների վտանգներին ենթակա զարգացող երկրներին օգնելու ողջ կարողությունները, ինչպես նաև սահմանել և իրականացնել Գործողությունների ծրագրում սահմանված նպատակներին և առաջնայնություններին հասնելու ուղղությամբ առաջընթացի կանոնավոր գնահատման միջոցառումներ, որոնք հիմնվում են Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության վրա:

գ) Գործողությունների ծրագրի իրականացման նպատակով որոշել աղետների վտանգներին ենթակա զարգացող երկրների օգնության համապատասխան գործողությունները: Երաշխավորել, որ ըստ նպատակահարմարության՝ համապատասխան գործողությունները կընդգրկվեն յուրաքանչյուր կազմակերպության գիտական, մարդասիրական և զարգացման բաժինների, քաղաքականության, ծրագրերի և գործողությունների մեջ, ինչպես նաև ապահովել դրանց իրագործման համար անհրաժեշտ գումարների հատկացումը:

դ) Օգնել աղետների վտանգներին ենթակա զարգացող երկրներին ձևավորելու աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարություններ, գործողությունների ծրագրեր և, համաձայն Գործողությունների ծրագրում սահմանված առաջնայնությունների, զարգացնել նրանց ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունները աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում:

ե) Համախմբել սույն ծրագրի իրականացմանն ուղղված գործողությունները համապատասխան համակարգող մեխանիզմների, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման խմբի և Մարդասիրական գործողությունների միջգերատեսչական մշտական կոմիտեի գործողությունների ծրագրերում, ներառյալ՝ ազգային մակարդակով գործող Միավորված ազգերի կազմակրեպության ռեզիդենտ համակարգողների համակարգի և Միավորված ազգերի կազմակերպության տարբեր երկրներում գործող աշխատակազմերի միջոցով: Բացի այդ, աղետների ռիսկի նվազեցման խնդիրներն ընդգրկել զարգացման օժանդակության ծրագրերի, ինչպես օրինակ՝ «Ընդհանուր երկրների գնահտումների», Միավորված ազգերի կազմակերպության զարգացման օժանդակության շրջանակի և աղքատության հաղթահարման ռազմավարությունների մեջ:

զ) Սերտորեն համագործակցելով գոյություն ունեցող ցանցերի և պլատֆորմների հետ՝ օժանդակել համաշխարհային մասշտաբով բնական վտանգների, խոցելիության, ռիսկերի և բոլոր մասշտաբների աղետների հետևանքների վերաբերյալ հետևողական տվյալների հավաքմանը և կանխատեսմանը: Այս նախաձեռնությունները պետք է ներառեն չափորոշիչների մշակումներ, տվյալների շտեմարանների պահպանություն, ցուցանիշների և ցուցիչների մշակումներ, օժանդակություն վաղ ազդարարման համակարգերին,

տվյալների ամբողջական և բաց փոխանակումներ, ինչպես նաև ոլորտի տարածքում կատարվող և արբանյակային հետազոտություններ:

է) Աղետի ենթարկված պետությունների պահանջով օժանդակել այդ պետություններին` ցուցաբերելով համապատասխան, ժամանակին և լավ համակարգված օգնություն, որը համապատասխանում է արտակարգ իրավիճակների ժամանակ ցուցաբերվող օգնության համաձայնեցված ուղենիշներին և համակարգված միջոցառումներին[20]: Այս օգնությունը տրամադրել ռիսկերի և խոցելիության նվազեցման, կարողությունների բարելավման, խաղաղային որոնումների և փրկարարական աշխատանքներում[21] միջազգային արդյունավետ համագործակցության ապահովման նպատակներով: Երաշխավորել, որ աղետի ենթարկված վայրերին միջազգային ուժերի արագ հասնելու ձեռնարկումները կմշակվեն պետական և տեղական մակարդակներով, և վերականգնման ու ռիսկի նվազեցման միջև էլ ավելի ամրապնդված կապ կլինի:

ը) Ուժեղացնել աղետի ենթարկված պետությունների անցումային փուլում կայուն ֆիզիկական, սոցիալական և տնտեսական վերականգնման, ինչպես նաև ապագա ռիսկերի նվազեցման նպատակով ստեղծված միջազգային մեխանիզմները: Սա պետք է ներառի օժանդակություն հետաղետային գործողություններում ռիսկի նվազեցման, վերականգնման և վերակառուցման գործընթացների, ինչպես նաև շահագրգիռ երկրների, փորձագետների և Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների միջև լավագույն փորձի, գիտելիքների և տեխնիկական օժանդակության փոխանակման գործողություններին ցուցաբերվող օժանդակություն:

թ) Բարելավել և տեղայնացնել աղետների կառավարման միջգերատեսչական ուսումնական ծրագիրը` հիմք ընդունելով աղետների ռիսկերի (ներառյալ աղետների նվազեցման, պատրաստվածության, արձագանքման և վերականգնման միջոցառումների) կառավարման ընդհանուր միջգերատեսչական տեսլականը և ծրագիրը:

## Ե. Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը

33. Ազգային, տարածաշրջանային, միջազգային և Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ և Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության միջգերատեսչական քարտուղարության օժանդակությամբ` Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գործընկերները և հատկապես Աղետների նվազեցման միջգերատեսչական առաջադրանքի խումբը և նրա անդամները, կախված այս մեխանիզմի և ինստիտուցիոնալ կարգադրությունների վերանայման գործընթացի ավարտին[22] ընդունված որոշումներից, պետք է նպաստեն սույն Գործողությունների ծրագրի իրագործմանը հետևյալ ձևով.

ա) Սույն Գործողությունների ծրագրի ավարտից հետո հետագա գործողություններին աջակցելու նպատակով մշակել դերերի ու նախաձեռնությունների մատրիցա` ընդգրկելով նախաձեռնող խմբի և այլ միջազգային գործընկերների առանձին անդամներին:

բ) Նպաստել Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգի և այլ համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում այդ կազմակերպությունների մանդատներին համապատասխան գործողությունների արդյունավետ և համալիր համակարգմանը, որի նպատակն է օժանդակել

20 Սահմանված է Գլխավոր ասամբլեայի թիվ 46/182 բանաձևում:

21 Գլխավոր ասամբլեայի թիվ 57/150 բանաձևի հետևողական կատարման նպատակով տարվող աշխատանքը:

22 Աղետների նվազեցման վերաբերյալ ինստիտուցիոնալ միջոցառումների վերանայումն ընթացքի մեջ է և կավարտվի Աղետների նվազեցման թեմայով համաշխարհային համաժողովի ավարտից հետո, գնահատական տալով Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության դերին ու արդյունավետությանը:

Գործողությունների ծրագրի իրականացմանը, բացահայտել իրականացման բացերը և խթանել խորհրդակցային գործընթացները, որոնց ընթացքում, հիմնվելով համապատասխան ազգային, տարածաշրջանային և միջազգային փորձի վրա, մշակվում են յուրաքանչյուր գերակա ոլորտի ուղեցույցները և քաղաքականության գործիքները:

գ) Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան գործակալությունների, տարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների, տեխնիկական և գիտական հաստատությունների, ինչպես նաև շահագրգիռ պետությունների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ անցկացնել քննարկումներ, որոնց նպատակը համընդհանուր, իրատեսական և չափելի ցուցանիշների մշակումն է՝ միաժամանակ հաշվի առնելով առանձին պետություններում ռեսուրսների առկայության հանգամանքը: Այդ ցուցանիշները կարող են օգնել պետություններին գնահատելու Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը: Դրանք պետք է համապատասխանեն միջազգայնորեն համաձայնեցված զարգացման նպատակներին, ներառյալ «Հազարամյակի հռչակագրում» ամփոփվածները:

Առաջին փուլի ավարտից հետո խրախուսվում է պետությունների կողմից նման ցուցանիշների մշակումը կամ եղածների կատարելագործումը՝ հիմք ընդունելով աղետների նվազեցման իրենց գերակայությունները և համընդհանուր ցուցանիշները:

դ) Երաշխավորել աղետների նվազեցման ազգային պլատֆորմներին ցույց տրվող օժանդակությունը՝ դրանց դերի և ավելացրած արժեքի հստակ շարադրանքի, ինչպես նաև տարածաշրջանային համակարգման միջոցով, որի նպատակն է աղետների նվազեցման համակարգված տարածաշրջանային մեխանիզմների, տարածաշրջանային ծրագրերի մշակման և համապատասխան կազմակերպությունների՝ հանրության հետ կապերի գծով խորհրդատուների միջոցով բավարարել Գործողությունների ծրագրում նշված քարոզչության և քաղաքականության տարբեր կարիքները և առաջնայնությունները:

ե) Գործողությունները համակարգել Կայուն զարգացման հանձնաժողովի քարտուղարության հետ՝ երաշխավորելով, որ Գործողությունների ծրագրի իրականացմանը մասնակցած համապատասխան գործընկերությունները գրանցվեն նրա կայուն զարգացման գործընկերների տվյալների շտեմարանում:

զ) Խթանել լավագույն փորձի, քաղված դասերի, առկա տեխնոլոգիաների ու ծրագրերի փոխանակումը, հավաքումը, վերլուծությունը, ամփոփումն ու տարածումը՝ որպես տեղեկատվության միջազգային հանգույց՝ օժանդակելով աղետների ռիսկերի նվազեցման կարողությունների ամրապնդմանը: Պահել աղետների ռիսկերի նվազեցմանը վերաբերվող գլոբալ տեղեկատվական համակարգ և աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ պետությունների, տարածաշրջանային և միջազգային գործընկերությունների[23] իրականացրած ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ համացանցային մասյան՝ «թղթապանակ»:

է) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մանդատով անցկացված համաժողովների և գագաթնաժողովների արդյունքների համալիր և համակարգված իրականացման և հետագա գործողությունների ֆայլերի համատեքստում[24] պատրաստել Գործողությունների

23 Սրա նպատակն է ծառայել որպես աղետների նվազեցման ֆայլերի փորձի և մեթոդաբանությունների փոխանակման միջոց: Համաժողովի արդյունքների քննարկման համար պետությունները և այլ կարևոր կազմակերպությունները հրավիրվում են՝ ակտիվորեն մասնակցելու գիտելիքների ձևավորման գործընթացներին՝ կամավոր հիմունքներով գրանցելով իրենց փորձը:

24 Գլխավոր ասամբլեայի թիվ 57/270B բանաձև, Միավորված ազգերի կազմակերպության համաժողովներից հետո ձեռնարկվող հետագա գործողություններ և «Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության» վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի կայացրած բանաձերի իրականացում, համաձայն որոնց՝ Գլխավոր քարտուղարը պարտավոր է «Կայուն զարգացման» շրջանակներում զեկուցել Գլխավոր ասամբլեայի երկրորդ կոմիտեին (54/219, 56/195, 57/256 58/214, 58/215, 59/231):

ծրագրի նպատակների և առաջնայնությունների իրականացման առաջընթացի վերաբերյալ ընթացիկ վերանայման զեկույցներ և ըստ պահանջի կամ նպատակահարմարության՝ Ասամբլեային և Միավորված ազգերի կազմակերպության մյուս մարմիններին ներկայացնել զեկույցներ և ամփոփագրեր, որոնք կազմվեն՝ հաշվի առնելով այն տեղեկությունները, որոնք ստացվում են ազգային պլատֆորմներից, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններից և այլ մասնակիցներից, ներառյալ՝ «Վաղ ազդարարման» թեմայով երկրորդ միջազգային համաժողովի (2003)[25] հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ առկա տեղեկությունները:

## Ձ. Ռեսուրսների համախմբում

34. Պետությունները, իրենց ֆինանսական կարողությունների սահմաններում, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները, համապատասխան բազմակողմ, տարածաշրջանային և երկկողմ համակարգման մեխանիզմների միջոցով, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների համախմբման համար պետք է ձեռնարկեն հետևյալ միջոցները.

ա) Համախմբել համապատասխան ազգային, տարածաշրջանային և միջազգային մարմինների, ներառյալ՝ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի համապատասխան ռեսուրսներն ու կարողությունները:

բ) Երկկողմ ու բազմակողմ խողովակների միջոցով ապահովել և նպաստել աղետների վտանգներին ենթակա երկրներում սույն Գործողությունների ծրագրի իրականացմանն այնպիսի գործողությունների միջոցով, որոնց թվում են ֆինանսական և տեխնիկական օժանդակությունը, պարտքի սպասարկելի մակարդակի պահպանումը, փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով տեխնոլոգիաների փոխանցումը, պետական-մասնավոր գործընկերությունների և «հյուսիս-հարավ» և «հարավ-հարավ» համագործակցության խրախուսումը:

գ) Աղետների ռիսկերի նվազեցման միջոցներն ինչպես հարկն է ընդգրկել զարգացմանն օժանդակող բազմակողմ և երկկողմ ծրագրերում, ներառյալ՝ այն ծրագրերը, որոնք վերաբերում են աղքատության հաղթահարմանը, բնական ռեսուրսների կառավարմանը, քաղաքաշինությանը և կլիմայական փոփոխության հարմարվողականությանը:

դ) «Գործողությունների ծրագրի» ավարտից հետո հետագա քայլերի իրականացմանը նպաստելու համար ապահովել կամավորական հիմունքներով համապատասխան ֆինանսական ավանդների մուտքը Միավորված ազգերի կազմակերպության՝ աղետների նվազեցման նպատակով ստեղծված հիմնադրամ: Ստուգել այդ հիմնադրամի ընթացիկ կիրառությունը և դրա ընդլայնման նպատակահարմարությունը, ի թիվս այլոց, նպատակ ունենալով օգնել աղետների նկատմամբ խոցելի երկրներին ձևավորելու աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարություններ:

ե) Ստեղծել գործընկերություններ, որոնք կիրականացնեն ռիսկերի բաշխման սխեմաները, կնվազեցնեն ապահովագրական վճարները, կմեծացնեն ապահովագրական ծածկույթը և դրանով կավելացնեն հետաղետային շրջանում վերակառուցման և վերականգնման համար առկա ֆինանսավորումը, նաև՝ պետական-մասնավոր գործընկերության միջոցով: Անհրաժեշտության դեպքում զարգացող երկրներում նպաստել ապահովագրական մշակույթի ձևավորման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

25 Գլխավոր ասամբլեայի թիվ 58/214 բանաձև:

## Հավելված

### Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում որոշ բազմակողմ զարգացումները

**Այս փաստաթղթի հետ կապ ունեցող բազմակողմ ծրագրերի և հռչակագրերի շարքն են դասվում[26].**

- 2005 թվականի հունվար ամսին Մավրիկիոսում տեղի ունեցած փոքր զարգացող տեսությունների կայուն զարգացման գործողությունների ծրագրի[27] վերանայմանը նվիրված միջազգային հանդիպումը, որի ընթացքում որոշվել է մեծացնել փոքր կղզի զարգացող տեսություններում խոցելիությունը նվազեցնելու գծով սահմանված պարտավորությունները՝ հաշվի առնելով փոքր կղզի տեսությունների՝ աղետներին արձագանքելու և աղետներից վերականգնվելու սահմանափակ կարողությունները:
- 2003 թվականի դեկտեմբերին Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային համաժողովի կողմից ընդունված մարդասիրական օգնության օրակարգը ներառում է «աղետների ռիսկի և ազդեցությունների նվազեցման, պատրաստվածության և արձագանքման մեխանիզմների բարելավման» նպատակ և գործողություններ:
- 2002թ. տեղի ունեցած Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի Յոհանեսբուրգի իրագործման պլանը, որի 37-րդ պարբերության համաձայն[28]՝ պահանջվում է «խոցելիության, ռիսկի, գնահատման և աղետների կառավարման, ներառյալ՝ կանխարգելման, նվազեցման, պատրաստվածության դրսևորման, պատասխան միջոցառումների և վերականգնման հարցերի կարգավորման առումով ցուցաբերել համալիր, բազմաթիվ վտանգների հաշվառումով ներառական մոտեցում, ինչը XXI դարում աշխարհի անվտանգության ապահովման կարևոր գրավական է» և առաջին հերթին օժանդակում է Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությանը: «Խոցելիության, ռիսկի նվազեցման և աղետի կառավարման» թեման ընդգրկված է 2014-2015թթ. կայուն զարգացման հանձնաժողովի բազմամյա ծրագրում՝ որպես այդ ծրագրի առանցքային թեմա:
- Նվազ զարգացած երկրների գործողությունների երրորդ ծրագիրը[29], որն ընդունվել է 2001թ., զարգացման ոլորտի գործընկերներից պահանջում է իրականացնել այնպիսի գործողություններ, որոնց հիմնական շեշտը դրվում է Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության իրականացման նպատակով այս երկրներում էական ծրագրերի և ինստիտուցիոնալ կարգադրությունների իրականացման վրա:
- 2000թ. «Հազարամյակի հռչակագիրը»,[30] որում կանխորոշվել են «խոցելիներին պաշտպանելու» և «մեր ընդհանուր միջավայրը» պահպանելու հիմնական նպատակները, համաձայն որոնց՝ պետք է «ամրապնդել համագործակցությունը բնական և մարդածին մի շարք աղետների ազդեցությունները նվազեցնելու ուղղությամբ»: Միավորված ազգերի կազմակերպության «Հազարամյակի հռչակագրում» ամրագրված պարտավորությունների կատարման գծով արձանագրված առաջընթացի համապարփակ վերանայումը պետք է իրականացվի 2005թ. հուլիս ամսին[31]:

---

26 Համապատասխան ծրագրերի և հռչակագրերի ավելի լրիվ ցանկը տե՛ս հետևյալ տեղեկատվական փաստաթղթում. «1994-2003թթ. Միջազգային բաղաքականության նախաձեռնություններից աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող հատվածներ», Աղետների նվազեցման միջգերատեսչական առաջադրանքի խումբ, իններորդ հանդիպում, 2004 թվականի մայիսի 4-5:

27 Գլխավոր ասամբլեայի թիվ 58/213 բանաձև: Փոքր զարգացող կղզի պետությունների կայուն զարգացման գործողությունների ծրագրի հետագա իրականացում:

28 A/CONF. 199/20:

29 A/CONF.191/11:

30 Գլխավոր ասամբլեայի թիվ 55/2 բանաձև:

31 Գլխավոր ասամբլեայի 58/291 բանաձև:

- Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը, որի սկիզբը, որպես միջ-կառավարական ծրագիր և մեխանիզմ (աղետների նվազեցման միջգերատեսչա-կան ծրագրային խումբ և միջգերատեսչական քարտուղարություն), դրել է 2000թ.[32]՝ Գլխավոր ասամբլեայի Տնտեսական և սոցիալական խորհուրդը: Միավորված ազ-գերի համակարգում այն ծառայում է, որպես կենտրոնական մարմին, որն ունի հա-մարակայնության իրազեկության բարձրացման, ցանցերի և համագործակցության ընդլայնման և աղետների պատճառների ու ռիսկերի նվազեցման տարբերակների, Յոկոհամայի ռազմավարության և գործողությունների ոլորտի մշակման մանդատ և պարտավորություն: Այն նաև «Բնական աղետների նվազեցման միջազգային տասնամյակին» հետևած շարունակական գործողության ծրագիր է:
- 2002թ. տեղի ունեցած Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի Յոհանեսբուրգի իրագործման ոլորտը[33], համաձայն որի՝ Կլիմայի փոփոխության միջգերատեսչական հանձնաժողովից պահանջվում է «բարելավել կլիմայի փոփո-խության ազդեցությունների գնահատման տեխնիկան և մեթոդաբանությունը և խրախուսել կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների շարունա-կական գնահատման գործողությունները...»: Բացի այդ, Գլխավոր ասամբլեան[34] և Կիոտոյի արձանագրության կողմերը[35] (որն ուժի մեջ է մտնելու 2005թ. փետրվարին) շարունակել են անդրադառնալ կլիմայի փոփոխության բացասական հետևանքնե-րին հատկապես այն զարգացող երկրներում, որոնք բնորոշվում են առավել խոցելի գործոններով: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան[36] պաշտպանել է Կլիմայի փոփոխության միջգերատեսչական հանձնաժողովի՝ կլի-մայի փոփոխության բացասական հետևանքները զարգացող երկրների սոցիալ-տնտեսական և բնական աղետի նվազեցման համակարգերի վրա գնահատելու շա-րունակական ջանքերը:
- 1998թ. Աղետների մեղմացման և փրկարարական գործողությունների համար հեռա-հաղորդակցական ռեսուսների մատակարարման մասին Տամպերի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2005թ. հունվարի 8-ին:
- Անվտանգ աշխարհի Յոկոհամայի ռազմավարությունը. Բնական աղետների կանխ-ման, պատրաստվածության և մեղմացման և դրա գործողությունների ոլորտի վե-րաբերյալ ուղենիշները[37] (1994թ.) ընդունվել են Բնական աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի ժամանակ՝ հիմվելով «Բնական աղետների նվա-զեցման միջազգային տասնամյակի» միջնաժամկետ վերանայման վրա:
- Միավորված ազգերի կազմակերպության «Երաշտի և/կամ անապատացման լուրջ վտանգի ենթակա երկրներում և հատկապես Աֆրիկայում անապատացման դեմ պայքարի կոնվենցիան»,[38] որն ընդունվել է 1994թ. և ուժի մեջ մտել 1996թ.: Միա-վորված ազգերի կազմակերպության Կենսաբազմազանության մասին կոնվեն-ցիան ընդունվել է 1992թ. և ուժի մեջ մտել 1993 թվականին:
- Գլխավոր ասամբլեան[39] (1991թ.) պահանջել է ամրապնդել Միավորված ազգերի կազմակերպության կողմից արտակարգ իրավիճակների և մարդասիրական օժան-

32 Գլխավոր ասամբլեայի 59/231, 58/214, 57/256, 56/195, 54/219 բանաձևեր:

33 A/CONF. 199/20, 37(ե) պարբերություն:

34 Բնական աղետների և խոցելիության վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի բանաձևերը (59/233 և 58/215):

35 FCCC/CP/1997/7/, լրացում 1 որոշում 1/CP.3, հավելված:

36 Բնական աղետների և խոցելիության վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի բանաձևերը (59/233 և 58/215):

37 A/CONF.172/9

38 Միավորված ազգերի կազմակերպության համաձայնագրերի շարք, հատոր 1954, No. 33480

39 Գլխավոր ասամբլեայի բանաձև 46/182

պակության համակարգման աշխատանքներն ինչպես բարդ արտակարգ իրավիճակներում, այնպես էլ բնական աղետների ժամանակ: Այն վկայակոչել է Բնական աղետների նվազեցման միջազգային տասնամյակի միջազգային գործողությունների ծրագիրը (բանաձև 44/236, 1989) և սահմանել մարդասիրական օգնության, պատրաստվածության, կանխարգելման, վերականգնման և զարգացման օժանդակության շարունակման մասին սկզբունքները:

United Nations Inter-Agency Secretariat
of the International Strategy for
Disaster Reduction (UN/ISDR)
Palais des Nations
CH 1211 Geneva 10, Switzerland
Tel: +41 22 9172529/762/759
Fax: +41 22 917 0563
isdr@un.org
www.unisdr.org

UN/ISDR Latin America
and the Caribbean
P.O. Box 3745-1000
San José, Costa Rica
Tel: +506 224 1186
Fax: +506 224 7758
eird@eird.org
www.eird.org

Asia ISDR outreach

Kobe, Japan
Jointly with OCHA
Hitomiraikan 5F, 1-5-2
Wakinohamakaigan-dori
Chuo-ku, Kobe 651-0073 Japan
Tel: +81-78-262-5550
Fax: +81-78-262-5554
izumi@un.org

UN/ISDR Africa
Block U Room 217
UNEP, Gigiri
Nairobi, Kenya
Tel: +254 20 624119
Fax: +254 20 624726
ISDR-Africa@unep.org
www.unisdrafrica.org

UN/ISDR Platform for
the Promotion of Early Warning
Görresstrasse 30
D-53113 Bonn, Germany
Tel: +49 228 249 88 10
Fax: +49 228 249 88 88
Isdr-ppew@un.org
www.unisdr-earlywarning.org

Dushanbe, Tajikistan (Central Asia)
39 Aini Street,
Dushanbe, Tajikistan 734024
Tel:+992 372 21 77 17
Fax: +992 372 51 00 21
tine.ramstad@undp.org

www.unisdr.org